



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԵՊԱՐԽԻ

ՄԲ ՁԱԳԱՅԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 44

ՄԱՅԻՍ 12/25 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԺԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

ԵՍ ԵՐ
ԵՐԱՆ
ՏՈՐԻՆԻ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի : 12/25 Մայիս : Թիւ 44

ՉՔՆԱՂ ՆԵՐԲՈՂԵԱՆ

Ս. ՆԵՐՍԷՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՅ

ՉՈՐ ԽՕՍԵՑԱԻ Ի ՓԱՌՍ ԱՄԵՆԱՍՈՒՐԻ ՀՈԳԻՈՅՆ

Մեր եկեղեցւոյ ամենիմաստ Ս. Հայրապետ՝ Ներսէսի Լամբրոնացւոյն այս հառը ոչ հայ առօրեայ գրականութեան գլուխ գործոց մի ծաղիկն է, աշխարհաբար քաղցմանութեամբ կ'ուզենք ընծայել մեր ընթերցողներուն ուսողիւ խորհրդածութեան:

Սրախ բոլոր սիրոյ ճնշումէն կը մղուիմ նուիրելու աղքատ մտքիս յղացումները՝ առթիւ այս մեծ աւուր: Դո՛ւք, ուրեմն, հանդիսակից ժողովուրդ, մի զլանաք նպաստը ձեր աղօթից իմ տկարութեանս: Տուէք ինծի այն շնորհքը՝ որ այսօր աշխարհի արուեցաւ, որպէս զի անվեհեր թափանցեմ Աստուծոյ գիտութեան իմաստին խորը ու ջամբեմ ձեզի անապական կերակուրը՝ պարարիչ հոգիներու: Շնորհաց առատ ուղիս մը ողողեց այսօր երկիրս. մաղթենք որ անկէ փրթած նշոյլները ճառագայ-

թեն մեր մտաց մէջ, ու առաջնորդեն մեզ հետեւելու աստուածային չափի շաւիղներուն: Ո՛վ սքանչելիք. ինչ որ հրեշտակները կը ցանկային աղօտ կերպիւ մը դիտել, այսօր շնորհաց հեղեղով մը իջնելով երկրիս վրայ սփռեցաւ: Ու կա՞յ մէկ մը որ չյուսայ հաւատքով վայելելու պարգեւները անոր: Այո՛, սուրբ Հոգին՝ զոր դաս դաս սերտութենէն ու քերովբէները ապշանքով դիտելով հանդերձ, չկրցան երբէք ըմբռնել անոր ճոխութիւնը, այսօր՝ ահա, իսկապէս իջնելով յագեցուց զմարդիկ իր անճառ խորհրդոց գիտութեամբը. ու ես ալ մին անոնցմէ, այս պահուս անձկալից կ'սպասեմ իմ պատուքս անցնելու իր յորդ շնորհաց մէկ կաթիլովը: Մարդը՝ արդարեւ, երկնցուց իր ձեռքը դէպի կենաց փայտը՝ որ առաջ իրեն զլացուած էր, առաւ ու կերաւ. և յաւիտենական կենդանութեան տիրացաւ: Եւ ո՞վ եղաւ միջնորդն ու մատակարարը այսպիսի շնորհքի մը, ո՞վ, եթէ ոչ Յիսուս Քրիստոս մեր Տէրը, կեանքը, լոյսը, ճանապարհը, դուռը, հովիւը, քահանայապետը, յոյսը, միջնորդը, բարեխօսն ու կտրապետը: Որնոր ինքնիշխան զօրութեամբ սլացաւ գնաց երկինք, ու փառահեղ կերպիւ մտաւ վարագուրէն ներս և Հօր Աստուծոյ ներկայացուց մարդկային փրկութեան երաշխիքը մեզ համար բարեխօս հանդիսանալով, և ի փոխարէն առատաձիւր պարգեւներ առնելով սփռեց երկրի վրայ, որմէ մենք եւս արբչիւ՝ յաւէտ մոռցանք նախամօր երկունքի վիշտերը:

Այսօր՝ մենք որ խորասուզուած էինք աշխարհի խաբեպատիր խաւարին մէջ, ընդունեցանք իմանալի լոյսը, հոգւոց պայծառացուցիչ և առաջնորդ կենդանեաց երկրին: Այսօր, մերկացանք մենք այն թաղծալից զգեստէն՝ զոր ժառանգած էինք մեր հօրմէն Ադամէ. ինչու որ, նոր Ադամը ոսկէուռ պսակով շքեղօրէն պծնեց մեզ: Այսօր հրաշալի հուր մը՝ բոցաճաճանչ նշոյլներով արտափայլելով երկրի վրայ, բուռն թափով այրեց լափեց մարդոց վրայէն փուշն ու սաստիկ պատիժները անիծեալ մեղաց: Այսօր, մարդկային ազգը՝ որ անմիտ անասնոց հաւատարած էր, արժանի գանուելով հրեղէն լեզուներու վիճակին, վերստացաւ կրկին բուռնականութեան շնորհ՝ ու պատկերացուց իր վրայ արարչին կերպարանքը: Այսօր, սաստիկ նշմամբ սրտագին երկիր իջաւ քաղցր ցօյր Հոգւոյն, ու դարձեալ օրհնութեան փոխարկեց սաստկահնչիւն ըմբոստանքը մեղաց: Այսօր՝ բուրումնաւոր անուշահոտ անապական կնգրուկին ծաւալելով, մառախլապատ թանձր ծուխը մահուան յեղաշրջեց և անմահութեան փոխարկեց: Այսօր, այն զգալի զօր՝ զոր այս աշխարհս նուիրեց վերին գաւառին, ասոր նիւթական տարրը նորոգելով աննիւթ քաղաքի մը պտակերին փոխակերպեց:

Ո՛վ հիանալի տուրեւառ երկնային ու երկրային շահերու, զի երկրայինք մարմին տուին, ու երկնայիններէն հոգին առին: Ադամայ այս տունը զՔրիստոս նուիրեց. և Աստուծոյ տունը փոխարէն մխիթարիչ

սուրբ Հոգին տուաւ անոր: Մարդիկ՝ մարդը տուին Աստուծոյ, և Աստուծո՛ւմ՝ զԱստուծո՛ւմ տուաւ մարդկութեան: Ահա այսպիսի է այն տուրեւաւոր՝ որ կը ցայտեցնէ աստուածային արդարութիւնը: Մեզ՝ ծառաներուս կողմէ, ուրեմն, նախ անհրաժեշտ է հնազանդութեան պատարագը, և յետոյ Տիրոջմէ խաղաղութեան պարգեւները: Նախ մենք՝ նոյնինքն՝ Քրիստոս խաղաղութիւնը. որ ցանկէ միջնորմը քանդելով՝ միացուց երկուստեք. և յետոյ հնչումը Աստուծոյ աւետեաց, որ խաղաղութիւնը քարոզեց հեռաւորներուն ու մերձաւորներուն: Կանխաւ Որդին նուաճելով մեր տխրեղծ բնութիւնը՝ մեզմեց Հօր զայրոյթը, յետոյ Հոգին զաւրով՝ երկնայնոց երամին մէջ խառնեց մեզ երկրաւորներս: Է՛ն յառաջ Քրիստոս խաչի մահուան հպատակելով՝ ինքզինքին վրայ հրաւիրեց թըշնամութիւնը, և յետոյ Հոգին օգնութեան փութալով մեր տկարութեան՝ բարեխօս հանդիսացաւ Հօր քով: Ի՛նչ անձիւր անձայր խորհուրդ մը Աստուծոյ ճոխ իմաստութեան կը տեսնուի հոռ, եղբարք, զի, լեռները քարոզ են անոր արդարութեանը, ու խորախոր անդունդները կը հռչակեն անոր իրաւունքները, ինչպէս կը վկայէ մարգարէն: Պօղոս կը մաղթէ որ այս իմաստութեան Հոգին ողողէ աշակերտները, այն Հոգին՝ որ ապշահար կ'ընէ քննող միտքերն, ու աստուածային սիրոյ հնոցներ կը դարձնէ զանոնք: Ի՛նչ նպատակաւ Որդին մարդ կ'ըլլայ, և ինչո՞ւ սոսկ մարդանալովը տեղի չունեցաւ աշխարհի փրկագործութիւնը: Ի՛նչ պատճառաւ նախատինքի խաչին ենթարկեցաւ անմեղը, և ինչո՞ւ անկէ վերջ ալ մարդիկ դեռ անկատար մնացին: Ինչո՞ւ երբ Որդին աշակերտաց հետ շրջած ու բնական պահուն դեռ անոնք տգէտ մնացին, և ինչպէս Հոգւոյն իջած պահուն միայն այնքան շնորհքներով զարգարուած պսակուեցան: Ինչո՞ւ Քրիստոսի այնքան մեծամեծ հրաշքներուն և ոչ մէկ մը չհաւատաց, մինչ Պետրոս այս օրունն մէջ երեք հազար հոգի աշակերտեց մէկ բարբառով: Քննութեան արժանի կէտ մըն է աս, և անհրաժեշտ՝ մեր սրտից շտեմարաններուն մէջ ամփոփելու Աստուծոյ իմաստութեան գանձերը, որպէս զի կարող ըլլանք նախ սրտափոյթ հաւատալ արդարութեան, և յետոյ բերանով խոստովանիլ փրկութիւնը: Զի, մեր փրկագործութեան եղանակը ոչ թէ զօրութեամբ եղած բան մըն է՝ այլ իրաւամբք ու արդարութեամբ: Եւ անո՛ւ այսպէս, Աստուծոյ ամենակար զօրութեամբ պիտի հաստատուի ամենաբաւական ողորմութիւնը երկնից մէջ և երկրիս վրայ:

Զի, նա որ զմարդ իր բարերար պատկերին համաձայն բարի ստեղծեց, ու տեսաւ թէ բանասարկութիւն նախանձը դաւաճանելով անոր հանդէպ՝ մեռցուց զանի, իր արդար իրաւունքով չուզեց վատչուէր ոսոխին ձեռքը թողուլ խաբէութեամբ բռնուողը: Ուստի, համագոյակից Բանին ըսաւ. Իջի՛ր, զգեցիր այն բնութիւնը զոր բարի ստեղծեցինք. որպէս զի ա՛լ իմ առջիս չծառանայ բարդ ի բարդ կուտակուած չարութեան ծուխը:

Բաջ գիացի՛ր, որ եթէ ան բնական կրից հետեւանօք տկարանայ իմ օրէնքներու մէջ, անմեղադրելի պիտի սեպուի այն պատուհասին համար՝ զոր այդ առթիւ իր վրայ կը հրաւիրէ: Իսկ եթէ նոյն այն դժբախտութեան հանդիպի անբնական ու ստացական կերպով, այն ատեն խստիւ զատապարտէ խաբողը, և զմարդ նորոգէ ողորմութեամբ ու զթուփեամբ: Հօրմէն այս պատուէրն առնելով Բանը, մեր մարմնոյն միացաւ. և մեր մարմինն ալ Աստուծոյ միացաւ անպատում միութեամբ մը, այնպէս որ անշիտի մնացին բնութեանց յատկութիւնները: Եւ մարդկային ամբողջ իսկութիւնը անձամբ փորձով ճանչնալու համար, երեսուն տարի շարունակ նոյն մարմնով ապրեցաւ, ու չուզեց իսկ օգտուիլ մարդկային բնութենէն դուրս օտար բնութենէ մը: Յորդանան գալով՝ հոն իր Հօր նուիրեց ամենակատարեալ մաքրութիւնը, և Հայրն ալ վկայեց թէ ան փառակից է Հօր ու ճշմարիտ Հոգւոյն: Հոգին զանի մղեց պատերազմելու բանասարկութիւնները, և թէ ի՞նչպէս ան կը խաբէր զմարդիկ բնութեան տկարութենէն օգտուելով ու կը գլորէր մեղաց վիճին մէջ: Զգուշացաւ ամէն կերակուրէ նոյնքան օրեր՝ որքան դասերու կը բաժնուի արդարոց գունդը. ու թոյլ տուաւ մարմնոյն որ իր բնական ըզծից համաձայն շարժի: Իսկ թշնամին դարանակալ կ'սպասէր անոր քովիկը, ու քանի՛ իր աղատ կամքով ան կը հրաժարէր բերանը բան գնելէ, նոյնքան թափով ոտին ալ չէր պատկառեր իր թունալից նետերը նպատակին սւղղելու: Ու երբ շարժեցաւ, ան յուսաց թէ պիտի յաջողէր կապարճին մէջ ունեցած սուր նետերը Տիրոջ դէմ արձկելու: «Հա՛ց ըրէ, ըսաւ, այդ քարերը հրաշքով, նետերը Տիրոջ դէմ արձկելու: Եւ արա՛դուն որ կրցար դիմանալ այդքան օր պահոց ժուժկալութեան. և արա՛րիչ եղիւր Աստուծոյ հակառակ:» Ու երբ լսեց թէ գրուած էր որ մարդս աւելի Աստուծոյ խօսքովը կ'ապրի քան հացով, ջանադիր կ'ըլլար ինք ալ սուրբ Գրոց անունով զանի խաբելու:

Այն ատեն ճանչցաւ որդայթները, խայտառակեց անոր մեքենայութիւնները, խորտակեցան որ լարած թակարդը՝ որով մարդիկ կ'որսար: Մեկնեց իր Հօր ու հրեշտակաց առջեւ, և ինքնիշխան զօրութեամբ վազնուտեց իր առջեւէն խաբեբան՝ մեր այս խաբուած բնութեան օրինաց համաձայն: Դանիէլ մանուկ շատ արդար դատաստան մ'ըլաւ. ամչցուց այն չար ծերերը՝ որոնք խաբելով մարդկային տկարութիւնը՝ ասոր վրայ կը բեռցնէին իրենց մեղքերը: Այ, չարութեան մէջ զսուամած, կ'ըսէ, ալ կը բեռցնէին իրենց մեղքերը: Այ, չարութեան մէջ բռնուեցար, զոր շատոնց կը գործէիր հաւաքմամբ դուն քու մեղքիդ մէջ բռնուեցար, զոր շատոնց կը գործէիր արդէն, զի անիրաւ դատաստան կը տեսնէիր ու մարդկային անմեղ բնութիւնը իբր քեզի մեղսակից կը դատապարտէիր: Քու չար նախանձդ զքեզ խաբեց, ու մարդատեցութեան կիրքը քու սիրտդ կոյրցուց: Այսպէս ուրեմն կը խաբէիք դուք մարդիկները, որոնք վախերնէն կամակից կ'ըլլալին ձեզի, բայց երկնաւոր Հօր Որդին բնաւ յանձնառու չեղաւ ձեր անօ-

րէնութեանց : Այս ըսելով ու ոտքերուն տակ ճգմելով ծեր 'օձը' առաջին յաղթութիւնը տարաւ ու հռչակեց մեր բնութեան անմեղութիւնը իր Հօր և հրեշտակաց առջեւ : Այն ատեն հրեշտակները մօտենալով , կ'սպասարկէին անոր . ան յաղթած էր այլեւս մեր սկզբնական մեղաց պատճառ եղող չարին , և արդարացնելով մեր այս բնութիւնը , իր հօր բազուկներով նուաճեց թշնամի դիւային բանակը :

Արդ , քանի որ ինք միայն չխաբուեցաւ չարէն ու Աստուծոյ հաճոյ գտնուեցաւ , ուստի սկսաւ ապաշխարութեան հրաւիրել զմարդիկ՝ արքայութեան յուսով : Բայց անոնք մեղաց խաւարէն կոյրցած՝ կը դժուարէին անոր կոչին հետեւելու , և այսպէս երկրային բաներու հոգին տակ ընկճած՝ անոնք չէին կրնար դէպ ի երկինք նայիլ : Աշխարհային ցանկութիւններէն դիւթուած՝ ճաշակ չէին զգար վերին փառքէն , ու կարելի ալ չէր վանոնք բռնի դէպ հոն մղել՝ քանի որ անձնիշխան ստեղծած էր զանոնք Աստուծոյ . իսկ քիչեր դարձի եկան հրաշից ու վարդապետութեան միջոցաւ : Եւ ո՞վ հրաշալիք . ի՞նչ ընել պարտաւորեցաւ այն ատեն իր Հօր առջեւ անմեղ հանդիսացողը , — ինչու որ պատժուելու արժանի էին այսուհետեւ մարդիկ , և անհրաժեշտ ալ էր զանոնք պատժելը և յետոյ կրնային Աստուծոյ արդարութիւնէն ողորմութեան արժանանալ — ան իր բոլոր իմաստութեան կոչում ընելով՝ մեռաւ մեր ամէնուս մեղաց փոխարէն , ու ջնջեց պատուեց մեր մեղաւոր ըլլալու ձեռագիրը : Ինք որ բնաւ չէր կրնար մահուան ենթակայ ըլլալ , դժոխք իջաւ և ազատ ձգեց մեռեալները : Ու կրկին անգամ ողջնալով՝ ողջ մնացողները հաստատեց : Իսկ անոնք որ Ազամայ յանգսնքով մահուան դատակնիքը կը կրէին՝ իր անմեղութեան շնորհիւ արդարացուց և կենդանեաց երկիրը փոխադրեց : Եւ իրօք , այսպէս կը խօսի Պօղոս աստուածապաշտութեան մեծ խորհրդոյն վրայով՝ որ մարմնով երեւցաւ . հոգւով արդարացաւ , հրեշտակներուն յայտնուեցաւ , քարոզուեցաւ հեթանոսներուն մէջ , հաւատարիմ գտնուեցաւ աշխարհի վրայ և փառքով համբարձաւ : Ու վարագոյրին ներքին կողմը մտնելով՝ պատարագ ընծայեց Հօր մեծ քահանայն՝ իր իսկ պատուական արիւնը : Խայտառակեց դաւաճանին խաբէութիւնները ու խաղաղութեան բարեխօս հանդիսացաւ մարդկութեան համար : Իսկ բարի Հայրը հաւանելով իր սիրելի Որդւոյն այս սքանչելի գործերուն , քակեց նախահօր Ազամայ դատակնիքը , Հոգին տուաւ անոր՝ որ տարածուի գառին արիւնով գնուած հօտին վրայ ու լուսաւորէ ամէնուն ալ միտքը վերին յուսով :

(Շարունակելի)

Ուկոյ Ծոսոյոյ իսալացի քերթոյ եւ մասեմագիր, ծնած ի Ծանթէ 1776, մեռած ի Լընսըն 1827. սասնելիմներորդ դարու ամենագրու գրողներու կարգը կը դասուի. քաղաքականութեան եւ գիշտութեան մէջ խռովայոյզ կեանք մը ունեցաւ: Դասական ոգիով գրեց. *Գեղոնները* (*Le odi*), *Շնորհները* (*Le grazie*) եւ *Գերեզմանները* (*i sepolcri*) եւ ուրիշ բարձր մը բնարեղական սաղիք. մեղամաղձոս եւ յոռեսես վիպասան մ'է: Իրեն գլուխ-գործոցը *Գերեզմաններն* են, որոնց մէջը Մահը նկատուած է իբրեւ ներշնչող մը մեծ եւ վսեմ գաղափարներուն անոնց որ կ'ապրին դեռ:

Զօն

Առ սիրելի բնկեր իմ
Լեւոն Գեղեզմանն

Թարգ. ՄՈՒՎՍԷՍ ԱՄՐԻԿԵԱՆ

ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ

«Deorum Manium jura sancta sunt»

Շիջածներու իրաւունքներն նուիրական բող համարուին.

1. Նոճիներու ըստուերին տակ արտասունքով

2. Քաջալերուած Յապիորներում, մահուան արդեօք

Քունն է նուա՞զ դաժան: Երբոր այլեւս Արեւն

Ինձի համար երկրի վրայ չ'աճեցընէ

Այս 'գեղեցիկ խոտերու ազգն եւ կենդանեաց,

Երբոր 'յողդողդ փաղաքանքով այլ իմ առջեւս

Չ'կայի՞նք ժամերը՞ն ապառնի ժամանակին,

Եւ ոչ քեզմէ, 'քաղցր բարեկամ, պիտի լըսեմ

Տաղն՝ եւ տըխուր դաշնակութիւնն որ զայն վարէ,

Եւ Սըրտիս մէջ խօսուն պիտի չըլլայ ոգին

Ոչ անարատ Մուսաներու եւ ոչ սիրոյ,

Միակ ոգի իմին կեանքիս աստանդական,

Քար մ'ի՞նչ ըսի՞նք պիտի ըլլայ կորսուած աւուրց

Որ որչէ իմ ոսկորներս ոսկորներէն

Անհուն՝ զորոնք յերկիր ու ծով կ'սերմանէ մահն:

Եւ յիրաւի է, Փինտէմոնտ, որ Յոյսն անգամ

Ղուսկ Դիցուհի, չիրիմներէն կը խուսափի,

Եւ մոռացումն պատէ ամէն բան յիւր գիշեր,

Եւ 'զործունեայ մի ուժ զանոնք կ'խոնջեցընէ

Շարժէ ի չարժ. եւ 'մարդն եւ իր գերեզմաններն

Եւ յոյժ յետին կերպարաններն, եւ նըշխարներն

Երկնի եւ երկրի կ'այլակերպին ժամանակէն:

Բայց մահացուն ժամանակէն ինչո՞ւ առաջ

Պիտի զըրկէ զինք յոյսէն որ թէպէտ չիջած

Այլ քաջացնէ պիտ Պլուտոնի սեմին վրայ զինք.

Հողի տակն ալ միթէ անի չ'ապրիր, երբոր

Դաշնակութիւնն օրուան անոր ըլլայ անձայն,

Եթէ կրնայ արթնցնել զայն քաղցր հոգերով
 Իրեններուն մաքին մէջ : Այս կապակցութիւնն
 Զգացուններու գորովալի՝ է երկնային ,
 Մարդերու մէջ է երկնային օժիտ . յաճախ
 Անով կ'ապրինք մերին չիջած ժրտեմքին հետ
 Եւ չիջածն ալ մեզ հետ , եթէ գրթոտ երկիրն
 Որ զայն մանուկ ժողովեց , և զայն կը սնուցանէր
 'ի մայրենի ծոց իւր ¹⁰ յետին մի ապաստան
 Ընծայելով , սրբազնէ՛ ամպրոպներու
 Նախատինքէն , գըւեհիկի և պիղծ ոտքէն
 Նըշխարն , և մի քար պահպանէ անունն , ծաղկով
 Եւ հոտաւէտ բարեկամ ծառ մը ամօքէ
 Ածիւնն անոր քնքրչալի ըստուերներով :
¹¹ Միայն այն որ ժառանգութիւն սիրոյ չ'ձգեր
 Ուրախ չ'ըլլար Սափորին վրայ . և թէ նայի
 Դիահանքէ կտք , կը տեսնէ իրեն հոգին
 Աքերոնեան տաճարներու լալիւնին մէջ
 Թափառայած , կամ Սատուծոյ մեծ ներումին
 Թեւով սքողուած . բայց իւր մոխիրը կը ճըգէ
 Ամայացեալ հողակոշտի եղիճներուն ,
 Ուր չ'աղօթեր սիրոյ զոհ կին , և ոչ անցորդ
 Լուռ — միայնակ կ'ըլսէ հեծեծն զոր Բընութիւնն
 Դամբաններէն մեզ կը զըրկէ տըրտմաթախիծ :

(Շարունակելի)

¹ Նոճիներու . ապա ծառ . նոճին հիներու քով հոգւոյ վերջին հանգստեան նշանը նկատուած էր *Aëra expressus* = սեւ նոճի (վիրգիլիոս) *invisæ expressus* = ստեղծի նոճի (Ովրատիոս) . հառաչ մ'եմ հեծող նոճերու մէջ սեւ . (Պ. Դուրեան .) ² Բաշխարհում *ursus* առնիվ . ոչ թէ սափորները այլ անոնց մէջի աճիւնները . ³ Սափորներում . որոնց մէջը մեռածներու աճիւնները կը հանգչեն . ⁴ գեղեցիկ խոտերու ազգն եւ կենդանաց . այսինքն բոյսերը և կենդանիները . ⁵ յողորմոյ փաղափշանով այլ իմ առջեւ յիշքեմ ժամերն ապառնի ժամանակին . ժամերը ըստ դիցարանութեան Արամազդի աղջիկներն էին , և յողգող փաղաքշանքով կ'ըտէ , փան զի միշտ կը փոխուին :

jan gere eqa os Titan veloci bus imperat horis

Տիտանը կը իրամայէ ձիերը կցել արագ ժամերու

(Ովիտիոս . Այլակերպութիւնք)

⁶ Բաղցր բարեկամ . փնտեմոնթէին բուռած է , որուն այս քերթուածը ուղղուած է : ⁷ Հռուկ Դիցունի կ'անուանէ յոյսը , որովհետեւ առիկայ ամենայնայնայն ցաւերուն մէջ իսկ չը ձգեր դժբախտները : ⁸ զործունեայ մի ուժ . Բնութեան ուժերը որ նիւթին վրայ կը գործեն : ⁹ Մարդն եւ իր գերեզմաններն եւ յոյժ յետին կենդանաներն եւ նըշխարներն երկնի եւ երկրի կ'աշխարհակն ժամանակին . այսինքն երկնի և երկրի նիւթերը ժամանակի մեծ շրջանի մը մէջ կը փոխուին յարաբեւօրէն , և մէկ նիւթը իր կերպը ձգելով ուրիշ կերպի կ'ենթարկուի : ¹⁰ յետին մի ապաստան . գերեզման մը . ¹¹ Միայն այն որ ժառանգութիւն սիրոյ չ'ձգեր . միայն չ'արը քիչ միւլմարանք կը զգայ իր գերեզմանի մտածումին մէջը , սիրոյ ժառանգութիւնը բարի գործերու յիշատակն է :

ՏՕԳԹԷՕՌՒ ՔՐՈՒ-ԹՈՆՆԻՆԿ

ՀՈԶԱԿԱԻՈՐ ՆՈՐՎԷԿԻԱՑԻԻ ՄԸ ԴԱՐՁԸ

Պարոն Արմէլիսի Սթոհոլմէ գրած այս գեղեցիկ տղեկութիւնները մեր ընթերցողներուն կը մատուցանենք, վստահ ըլլալով որ իրենց շատ հաճելի պիտի ըլլան՝ խղի եւ նկարագրի ինքնատիպ արտայայտութեամբը:

Հիւսիսային կողմերու առաքեալ Ս. Անսքարիոսի մեծ գործը, զոր նա սկսած էր իններորդ դարուն՝ Սկանտինաւեան երկիրներու մէջ, զարգացաւ գեղեցիկ արդիւնքներ յառաջ բերելով: Սկանտինաւիոյ մէջ Կաթողիկէութեան կարեւորութեան ու յառաջդիմութեանը կը վկայեն փառահեղ տաճարներն ու եկեղեցիները որ կառուցուեցան՝ Ի Շուէտ, Ի Տանիմարքա եւ Ի Նորվեկիա, Կաթողիկէ նախնիքներէ: Ուրիշ յայտնի փաստ մըն են այս զարգացման՝ անհամար վանորայք, որոնք հոն, ինչպէս նաեւ այլուր, կեդրոն եղած են մտաւորական եւ հոգային մշակութեան, եւ անկեղանոցներն, ուր կաթողիկէ եղբայրութիւնը աւետարանական պատուէրները կը գործադրէր: Սկանտինաւեան թագաւորութիւններու մէջ, ինչպէս նաեւ ուրիշ երկիրներ, ուսուցումը եկեղեցւոյ գործը եղած է միշտ: Ա՛ն է որ կը զբաղէր դպրոցներով, ան էր որ կը հաստատէր Ուսուցիչ եւ Քրօնհակի Համալսարանները:

Եւ Սուրբերու չարքին մէջ ալ չե՞ն կարդացուիր միթէ նուիրական անուններն Սկանտինաւեան Սուրբերու, Ս. Երկոսի, Ս. Կանուտոսի, Ս. Սլաֆի, հռչակաւոր Սրբուհւոյն Պրիճիդայի եւ Սրբուհւոյն Կատարինէի վաստենեան:

Բայց Ս. Անսկարիոսի գործը ընդհատեցաւ երբ բողոքականութեան մերթիւր անցաւ նաեւ Սկանտինաւեան երկիրներու վրայէն: Եկեղեցիները թալլուեցան եւ մերկացան իրենց զարդերէն, վանքերը աշխարհականացան. իսկ խեղճ ժողովուրդէն իլուեցաւ Տեառն մերոյ Յիսուսի հաստատած Ս. Կրօնքը, անոր տեղ ներմուծելով բնաւ Աստուածային իշխանութիւն եւ առաքելութիւն չունեցող օտակական մարդիկներու հնարած անյարիր ու քմածին դաւանութիւնները: Աշխարհային իշխանութիւնը որ նենդութեամբ կամ բռնի կերպով մտցուցած էր նոր ազանդը, ամենախիստ օրէնքներով պաշտպանեց իւր անօրէն գործը, դարձի եկողները պատժելով աքսորքով կամ գոյքերու զրաւումով: Բայց հիանալի բան, ճիշդ այս ժամանակին էր որ Սկանտինաւեան տեսաւ իր նորագործերէն երկու ամենէն երեւելի եւ ազնուականները: Այն ատեն էր որ Նիկողայոս Սթէնոյ, դանիացի բնախօսը, որուն անունը ճանչցուած է լոյր աշխարհի մէջ, ակադեմիական իր փայլուն ասպարէզը կը զոհէր, կաթողիկէ կրօնքը գրկելու եւ աղքատ առաքեալ քահանայ մ'ըլլալու տարփանօք: Այն ժամանակ էր նոյնպէս որ գիտնական եւ հռչակաւորն Լարս

Սքիթթէ, Շուէտի դեսպան ի Լիզպոնա, Կաթողիկէութեան անցաւ, և դեսպանական չքել պալատը փոխանակեց մենավայրի մը ճգնասենեակին, քաղաքագէտի ոսկեճամուկ պատմութեանը՝ փրանկիսկեան կրօնաւորի մը խոնարհ սքեմին հետ:

Ստոյգ է որ ո՛չ Սթէնոյ ո՛չ Սքիթթէ կրցան արդիւնաւոր կերպով աշխատիլ Կաթողիկէ կրօնքի Սկանաինաւիոյ մէջ զարգացումին, որովհետեւ խիստ օրէնքներ կ'արգելուին ու և է Կաթողիկէ շարժում հիւսիսային գաւառներու մէջ, միայն օտար դեսպանատուններու մատուռներուն մէջ է որ յաւիտենական կանթիլը կը վառէր տապանակներու առջև: Սակայն միթէ Ս. Եկեղեցւոյ և իւր սպասաւորներուն գործին համար չէ՞ որ ըսուած է. «Հաւերեոյ, զի յառիշեմական:» Խաւարի չրջանէ մը յետոյ, արչալոյսը ծաթեցաւ վերջապէս ի Հիւսիս, վերջին դարու կիսուն մօտ, կրօնական աղատութիւնը մտաւ Սկանաինաւեան երեք տէրութեանց մէջ, ի Տանիմարքա (1849) գրեթէ կատարելապէս, ի Նորվեկիա (1845) ըստ բաւականի ընդարձակ, իսկ ի Շուէտ (1860) բաւական սեղմեալ: Ահա այն ատեն Սկանաինաւք սկսան իրենց Կաթողիկէ նախնեաց հաւատքին վերադառնալ:

Մեր ժամանակի այս նորադարձերուն ամենէն հռչակաւորներէն մէկն եղաւ Տր. Քրոխ-Թոննինկ, Նորվեկիացի գիտնականն, որ անցեալ տարի վախճանեցաւ:

Քրոխ-Թոննինկ ծնած էր ի 1842, ի Նորվեկիա, ուր իր հայրը պաշտօնեայ մըն էր: Ակադեմական փայլուն ուսմունքներէ վերջը նախ գիմնադիմի ըրօֆեսօր եղաւ, ապա Քրիստիանիոյ մէջ կառավարական Եկեղեցւոյ Հովիւ, և միեւնոյն ատեն այդ մայրաքաղաքին Համալսարանին մէջ կարեւոր աթոռ մը կը գրաւէր ուսուցչապետութեան: Ինքզինքը ծանօթացուց ո՛չ միայն ի Նորվեկիա ի Շուէտ և ի Տանիմարքա, այլ նաև Սկանաինաւիոյ սահմաններէն ալ դուրս, բազմաթիւ գիտնական մեծարժէք մատենագրութիւններով, ինչպէս նաև ժողովրդական գիրքերով: Ինչպէս որ շուէտական բողոքական մեծ թերթ մը կը գրէր, Սքոֆհոլմ Տակպրս, Տր. Քրոխ-Թոննինկի յիշատակին նուիրուած յօդուածի մը մէջ, իւր գիտնական երկերը այնքան ընտիր և հոյակապ են, որ դասական հոմարուած են: Եկեղեցւոյ Ս. Հայրերուն վրայ ուսումնասիրութիւնը մասնաւոր սիրով մը կը տոչորէր զինքը: Գիտնալով թէ իր հայրենակիցներուն նախկին Եկեղեցւոյ նկատմամբ ունեցած ծանօթութիւնը ո՛րչափ աննշան էր և հարեւանցի, ժողովածոյ մը հրատարակեց, կոչելով զայն՝ «Վկայութիւնք Եկեղեցւոյ Հարց»՝ ընդարձակ գործ մը, տասնեւեօթը հատորներով:

Այս ուսմունքները Քրոխ-Թոննինկի վրայ խորապէս ազդեցին: Այսպէսով բողոքական աստուածաբանը դէմ առ դէմ կը գտնուէր Կաթողիկէութեան հետ: Լուսերական գիտնականը, անթիւ աղանդներու բաժ-

նուած և «Ամենուն պատերազմը ամեն բանի մէջ» նշանաբանն ունեցող զոքականութեան քառսին մէջէն ելլելով, տեսաւ իր առջեւ կանգնած կաթողիկէ Եկեղեցին, իւր ամբողջ վսեմ գեղեցկութեամբ, աստուածային ճշմարտութեան զրոշմով՝ «Միութիւն Եկեղեցւոյ» :

Այսպէս արթնցաւ Քրոխ-Թոննինկի սրտին մէջ քրիստոնէութեան միութեան փափագը. ամենէն եռանդուն աշխատակիցն եղաւ այն շարժումին զոր կը ներկայացնէր Աղօթքի դաշնակցութիւն՝ «Զի ամենեքիւ մի» : Միութեան իր բաղձէնքը քանի կ'երթար կ'աւելնար ու կը զօրանար, երբ կը տեսնէր անթիւ բաժանումներն և ներքին պայքարները բողոքականութեան, ուր, աւետարանական ազատութեան պատրուակին ներքեւ, Աւետարանի ճշմարտութիւնները կ'ուրացուին :

«Ամենուրեք բարձրաձայն կը պահանջուի ազատութիւն՝ սորվցնելու, ազատութիւն՝ գործելու, կը գրէր Տր. Քրոխ-Թոննինկ, և այն աւատածեռնութիւնը որով արդի բողոքականութիւնը ամէն ինչ կը շնորհէ յայսմ մասին՝ կը թուի անսահման : Ահա քանի մը իրողութիւնք :

«Լուտերական Եկեղեցին կը դաւանի իր հաւատքը ի Ս. Երրորդութիւն. սակայն աս հիմնական վարդապետութեան ժխտումը կ'ընդունի :

«Նա կ'ընդունի Քրիստոսի Աստուածութիւնը. բայց թոյլ կուտայ որ զայն ուրանան :

«Նա կը քարոզէ սկզբնական մեղքին հաւատալ, բայց իր սպասուորներուն բնաւ չարգելուր որ զայն մերժեն :

«Կը դաւանի նա որ իրկութիւնը Քրիստոսիւ եղած է : Կ'ուրանան այս վարդապետութիւնը, և Լուտերական Եկեղեցին, իբրեւ Եկեղեցի, կը լռէ : Կը դաւանի նա Քրիստոսի Յարութիւնը, բայց թոյլ կուտայ որ իր սպասուորները զայն ուրանան :

«Աստուածաշունչի Հոգեւոյ Սրբով ներշնչումն, արդէն ճանչցուած պաշտօնական վարդապետութիւնը, մօտ ժամանակէն պիտի վտարուի իբրեւ վիպական բան մը : Նոյնպէս Խորհրդոց իրական և խորհրդանշական արդիւնքին պաշտօնական վարդապետութիւնը կ'անհետանայ սակաւ իբրեւ լոկ ձեւակերպութիւն մը. և Լուտերական Եկեղեցին կը լռէ՝ յաւէտ :

«Կը դաւանի նա իր հաւատքը հրաշքներու համար, որոնց վրայ հաստատուած կը կենայ ամբողջ քրիստոնէութիւնը : Իւր պաշտօնէից շատերը կ'ուրանան անոնց կարելիութիւնը, և Լուտերական Եկեղեցին կը լռէ :

«Պահանջուած ազատութիւնը, որ իրօք ալ շնորհուած է, ուրիշ բան չէ եթէ ոչ իրաւունք, ուրանալու այն ամեն բան որ յաւիտեայ փրկութեան համար անհրաժեշտ է, եւ միեւնոյն ատեն հաւատարմութիւն իր անդամ այս փրկութեան եկեղեցւոյն(!) : Այս ազատական շարժումի ճշմարիտ պատճառն է ազատախօսութիւնը և ժողովուրդներու սակաւ յաւաքացող անքրիստոնէութեան :

թիւնը : Իրաւամբ, ամենամեծ դաւանութեանց մէջ, մեկ եկեղեցի մը միայն կայ որ դրականաբար և իր պատուիրաններուն համաձայն կը պահպանէ քրիստոնէական օրէնքը՝ կատարեալ և անվթար, — և այս դաւանութիւնն է՝ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՆ :

(Շարունակելի)

ԱՆԿԻՐԻՈՅ ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

Էնգարէ 5/18 Մայիս 1912

Միւտիւր էֆէնտի

Պունտան իբի պուչուգ սէնէ ագտէմ Սթամպօլ միլլի կաղէթալարնտան պազըլարնտա՝ Էնգարէ Գաթօլիք Գապրիսթանընըն վիրան վէ մէթրուք հալինտէն միւպահիս, վէ սնտէ վուգու պուլան միւէսսիֆ անվալ հազգընտա պազը պէնտէր կէօրիւնսիւ : Յիւհազըզէ օլ թարիխտէ Գապրիսթանըմըզ փէք աճընաճագ պիր հալտէ, վէ հէր նէվ հազարաթա մարուզ պուլունմագտա իքէն, էլեէվմ պիլութֆիի թաալա պու հալ թէպէտտիւլ իթմիշ օլմաղլէ թաշրատա ալէխուսուու Ասիթանէտէ պուլունան միւթէատտիտ միլլէթտաշլարմըզըն վէ հէմշէրիլէրիմիզին թէսէլլիսի իշին աթիտէքի մէգալէմի Արձագանգըն պիր նուսխէսինտէ տէրճ իթմէնիզի իսթիւրհամ իտէրիմ :

Միւտտէթը մէտիտէտէն պէրու Էնգարէ Գաթօլիք ճէմաաթը մունթաղամ պիր Գապրիսթանա մալիք օլմագ արզուսընտա իքէն, Գապրիսթանըմըզըն էրմէնի պիրատէրլէրիմիզ իլէ միւլթէրէք պուլունմասընտան վէ պազը մէվանիտէն էօթրիւ պու արզուսընտա տէսթրէս օլմամըշ իտի : Պունտան իբի սէնէ մուգատտէմ Էնգարէ կղերինտէն ԳԳ, Պահապանեան Յովս. Մ. Վարդապետ վէ Գամպուրեան Պօղոս Վարդապետ Գապրիսթանըն թանգիմ վէ թանգիֆինէ թէշէպպիւս իտէրլէր, օլ վազթ Եպիսկոպոսական փոխանորդ պուլունան Բօլաթեան Մ. Վարդապետին միւսաատէսիլէ վէ Միլլի իտարէ Մէճլիսինին թէնսիպ կէօրմէսիլէ ճէմաաթտան իանէ ճէմինէ իպթիտար իտէրլէր : Ազ կիւն զարֆընտա մէմուլին ֆէվգինտէ պիր մէպլալըն հուսուլէ կէլմէսիլէ քէնսիլէրէ մուին վէ բէֆիգ Աճէմեան Պօղոս վէ Սէյիահան Բիէր էֆէնտիլէրի վէ օնլարըն տէլալէթի իլէ Էնգարէճէ էն մահիր պիլինէն ձիվան Գալֆալը Միյմար ալըպ, չէօյլէճէ պէշ քիշիտէն միւրէթթէպ պիր մէգարլըգ Գօմիսիօնը թէշքիլ օլուր :

վէ Մէզարըլըգտա հափրիյաթ , ինչաաթ պաշլար : Պուշու միւշահէտէ էտէն էհալինին խայիշի թէզայեիւտ իտէր , իանէ ճէմինտէ հիշ պիր չէթինլիք կէօթէրմէզ օլուր , չէօյլէ քի ազ վազթ զարֆընտա Գապրիսթան տէրու- նինտէ 1,800 մէթրօ գատար միւքէմմէլ շօսէլէր հափըլըզ շօսէլէրին հէր իքի ճիհէթի պինէ եազըն աքասիա , բավլօնիա , քավաք , սալգըմ սէօ- յիւտ վէ կիւլ ֆիտանլարը իլէ թէզեին օլուր , միրուրը զէման իլէ ել- գըլմազա եիւզ թուրմուշ օլան սապըզ վարըշլար թէրֆի վէ թամիր ի- տիլիւր . գըշըն վէ եազըն թէքմիլ պիր աիլէյի իսթիյազ էտէպիլէճէք միւ- քիմմէլ պիր պէքճի էվի ինչտ իտիլիւր . վէ Գապրիսթանըն էն միւթէպէր պիր մէվզըրնտա էփէյիճէ կէնիշ պիր Մատուռըն էսասլարը վազ իտիլիւր : Իքի սէնէտէն պէրու Գապրիսթան Գոմիսիօնը քէնտի Դիւանընը միւ- քէմմէլ սուրէթատէ թէշքիլ իթմիշ մուզաննէն վէ մուշթաղամ իճթիմա- լարտա իճրավի քարէրլէր վէրմէքլէ , պիր թարաֆտան իանէ ճէմինէ , տիկէր թարաֆտան Գապրիսթանըն ինչաաթը պապինտէ եօրուլմազ դայ- րէթի սայէսինտէ էլէէվմ մէզքիւր մահէլ պիր պաղչէ , լաթիֆ պիր կիւ- լիսթան հալինի իհրազ իթմիշ , էհալիյէ ֆիրուսթ իտիլէն մէզապիրի մախ- սուսէտէն պազըլար ինչա իտիլմիշ , պազըլար իտիլմէքտէ , չէհիրին իչինտէ էն միւթէպէր թուրթուլան վէ ումուսիյէթին եէվմիյէ իչմէքտէ օլտըզը Հանըմ Փուշուար սուլու Գապրիսթանըն թա վասաթ պիր մահէլինտէ լէյլ ու նիհար ազմագտա վէ միւթէատտիտ էշճարը սուլմագտա օլտըզը կիպի , Գապրիսթանըն էն պէօյիւք շան ու չէրէֆի , վէ տինտար էհալի- միզին պատիի մէսէրրէթի օլան չէյ տէ 300 քիշի իսթիյապընա էլվէրիշլի , դայէթ լաթիֆ , իրի մէրմէր թաշլար իլէ հափըլմըշ քեամիլէն քեարկիր Մատուռ տըր :

(Մապսի վար)

ՎԱՐԴԱՆ ՓԱՇԱ

(1815-1879)

Պատմական դրուագներով շահաքըքրուող մէկը իր պրպտումներու ատեն շուտով կ'անցնի այնպիսի դէպքերու վրայէն , որոնք պատիւ չեն բերեր ազգի մը : Բայց երբ այդ դէպքերու միջոցին երեւան կու գայ մէկը որ անվեհեր ախոյեան կը կանգնի արդարութեան և ճշմարտու- թեան , այդպիսիին անուան տաջև կը խոնարհի և մանրամասն կը քննէ անոր գործունէութիւնը :

Չեմ ուզեր հոս հակահասունեան յաւէտ ցաւալի պատահարները

վերջիցիւ և դիւրագգածութիւններ վիրաւորել, բայց երբ օրուան տխուր դէպքերը կը նմանցունին անցեալի մէջ պատահած նմանօրինակ դէպքերու, միտքս կ'իյնայ թէ այն ատեն, շատ մը պատճառներով, պայքարը աւելի ուժեղ ըլլալով հանդերձ, գտնուած են բազմաթիւ ճշմարիտ Հայ-Կաթողիկէներ որ արդարութիւնն և ճշմարտութիւնը պաշտպանած են արիաքար իրենց ունեցած օրինաւոր բոլոր միջոցներով և ասոնց մէջ կը գտնուէր նաև գրչի վաստակաւոր մը, Կ. Պոլսոյ հայ քաղաքութեան նահապետը, որուն անունը մինչև հիմայ յարգանքով կը յիշուի և որ կը կոչուի Վարդան Փաշա: Այո՛, Յովսէփ Վարդանեան, որ աւելի ծանօթ է Վարդան Փաշա յորջորջմամբ, ճակատաբաց պաշտպանած է իր գրչին ամբողջ հեղինակութեամբ Կաթողիկէ Եկեղեցւոյ հիմնական սկզբունքները և հոգեւոր իշխանութեան ներկայացուցիչները: Իր այս ընթացքը ոչ թէ ի գին մամոնայի եղած է, այլ միայն ի սէր արդարութեան անսալով իր համոզեալ կաթողիկէ հրապարագրի խղճին:


Այսօրուան պէս այն ժամանակ ալ Պոլսահայ մամուլը լի էր ամէն տեսակ երեւակայելի և նոյն իսկ աներեւակայելի լուրերով, Հասուն կաթողիկոսի մէկ ամինապարզ որոշումը զանազան և զարմանազան մեկ-նութիւններու տեղի կու տար. Գէորգ Այվազեանի «Մամուլ»ը որ յատկապէս այս պայքարին համար օրաթերթի վերածուած էր Յակոբ Կէօջեանի նիւթական օժանդակութեամբ, ամէնէն աւելի կը դրդէր ժողովուրդին ընթերցող զասակարգը: Բոլոր այս հրատարակութեանց դէմ Վարդան փաշա իր հոսիկու գրչով անդադար կը պատասխանէր և յաճախ այնպիսի փաստերով կը զարդարէր իր յօդուածները որ հակառակորդներն իսկ կը համոզէին. եթէ ասոնք ուխտեալ թշնամիներ չէին Եկեղեցւոյ:

Շատ երկար պիտի ըլլար հոս իր ամբողջ գործունէութիւնը պատկերացնել. այդ գերազանցապէս շահեկան պորձը աւելի ձեռնհասներու կը թողում:

Իր ազգասիրութեան վրայ չեմ կարծեր որ տարակուսողներ գրտնուին և եթէ Կաթողիկէ Եկեղեցւոյ իրաւունքները պաշտպանեց, ասով անգամ մըն ալ ապացուցած եղաւ թէ մարդ կրնայ ճշմարիտ հայ եւ համոզեալ կաթողիկէ ըլլալ միանգամայն:

Հոս ճիշդ տեղն է Վիրգիլիոսի հետ ըսելու —
Discite justitiam moniti, et non temnere divos...

Պ. Ա.



Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ռ Վ Մ

Կը գրեն Աթենքէ թէ նոյն մայրաքաղաքին մէջ գումարուած Արեւելագէտներու Համաժողովին մէջ արտաքոյ կարգի մեծարանաց առարկայ հանդիսացաւ Բահանայապետական պատուիրակին Հրամ. Ուլիսէ Տէնուէցիոյ, Հոյակապ բրոֆէսէօրն յունարէն լեզուաւ փառաւոր ճառ մը խօսեցաւ, որ կատարեալ խանդավառութիւն մ'արթնցուց, և մայրաքաղաքին բոլոր թերթերուն մէջ արտատպուեցաւ. Համակիր մեկնաբանութիւններով Տէնուէցիոյ շրջապատուեցաւ ամենափափուկ մեծարանքով և ուշադրութեամբ. պատրիարքական բեմին վրայ առաջին տեղը յատկացուեցաւ իրեն, արքայական ընտանիքէն վերջը, Բոլոր նախարարները, Պ. Վէնիցիլոսի հետ միասին, և բոլոր մետրոպոլիտները եկան իրեն մատուցանելու իրենց յարգանքները, իբրեւ Հռովմայ Բահանայապետին Պատուիրակին, Գիտնական Արեւելագէտը, Աթենքէ մեկնելէ առաջ, արքայական պալատան մէջ ճաշի հրաւիրուեցաւ:

* Թիքանցիի աղետին մէջ խղիւղեցներէն էր նաեւ Միացեալ Նահանգներու Նախագահ Մ. Թաֆթի զինակիրը՝ գնդապետ Մ. Պըթ. Արդ, գնդապետը Հռոմ ալ եկած էր, և Սրբազան Բահանայապետն զինքն մասնաւոր Ունկնդրութեան ընդունած և տնոր մատուցած էր Մ. Թաֆթ Նախագահին ինքնագիր մէկ նամակը. Ապա Ս. Բահանայապետէն յանձնուեցաւ իրեն ինքնագիր մի պատասխան, զոր կը տանէր նա առ Մ. Թաֆթ, Թիքանցիի վրայ նաւարկելով: Սրբազան Բահանայապետը ցաւակցական հեռագիր մ'ուղղեց Մ. Թաֆթի այս աղետալի կորստեան համար, որուն նա պատասխանեց զգածեալ շեշտերով և շնորհակալութեամբ:



ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ

Համբարձման օրն Ամենապ. և Գերերջ. Հոգեւոր Տէր Ան. Յղ. Կուսանայ Մայր Վանատան մատարն մէջ կատարեց, ի ներկայութեան Արհ. Զէլէպեան Եպ.ի, Նորնծայ հինգ Կոյսերու զգեստաւորման արարողութիւնը, որ մեծաւ շքեղութեամբ տեղի ունեցաւ Նորին Գերերջանկութեան հոն մատուցած Ս. Պատարագի ժամանակ: Օրուան հանդէսին և կատարուած արարողութեան յարմար խօսակցութիւն մ'ըրաւ Հոգեւոր Տէրը, իրենց կողման օրբութիւնը և Աստուծոյ առջեւ իրենց ստանձնած պարտականութիւնը պարզելով: Մատուռը լի էր նոյն Կարգի մայրապետներով և սանուհիներով, որոնք ուշադրութեամբ հետեւեցան գեղեցիկ արարողութեան: Յետոյ մեծ սրահի մէջ Աջահամբոյրի արարողութիւնը կատարուեցաւ:

* Արհ. Յովհ. Եպ. Նաղլեան գացած է յԱմասիա, ուր շատ փառաւոր ընդունելութիւն մը գտեր է տեղւոյն ժողովրդեան կողմանէ, ինչպէս եղած էր նաեւ ի Սամսոն և ի Մարզուտն, ուր խանդավառած էր իրեն հանդէպ ամբողջ ժողովուրդը, և իր գեղեցիկ ճառախօսութիւններուն հիացած ներկայ կը գտնուէին ոչ միայն Կաթողիկէ այլ և հայ և բողոքական ժողովուրդք, շնորհաւորելով Կաթողիկէները այսպիսի արժանքնտիր Եպիսկոպոս մ'ունենալուն համար: Ամասիա մրցեր է այս յարգանքի մէջ, Կաթողիկէ և ձիւնորներու խումն բազմութիւն մը գնացեր է գիմաւորելու Եպիսկոպոսը քաղքէն ժամ մը հետի. քաղաքը մտնելուն սկսիւր են զանգակներն հնչել, մինչդեռ զպիւրները կ'եղանակաւորէին այսօր ուրախացեալ շարականը: Արհ. Եպիսկոպոսը գեղեցիկ և ազդեցիկ խօսքերով միութեան ժողովուրդը: Այցելեց ապա Յիսուսեան Հարց բնակարանն Հրաւախառի երգչախումբով, և բալկին մէջ նուագախումբը կը թնդար: Ժողովրդէն ստորագրուած մի

հանրագիր մատուցուեցաւ Եպ.ին, իբր առհաւատչեայ իրենց խոնարհ հպատակութեան առ Ս. Աթոռն և առ իրենց արժանաւոր Եպիսկոպոսն:

Յիսուսեան Կրօնաւորաց մեր ժողովրդեան հանդէպ բարեացակամ վերաբերումին և իրենց յոյժ օգտակար և անձնանուէր աշխատանաց յիրաւի երախտագէտ ըլլալու ենք:

* * Անկիւրիոյ Եպ. Արհի. Գր. Եպ. Պահապանեան իր հովուական պաշտօնը ճշգիւ և մեծ միջիթարութեամբ ժողովրդեան կը կատարէ: Ի մէջ այլոց, այցելել է նաեւ տեղական Ս. Սիրտ Յիսուսի վարժարանը որ տեղւոյն կրթական ժողովոյ խնամով տակաւ կը յառաջդիմէ: Հոն մատուցել է Ս. Պատարագը, և ուրիշ մեծ սրահին մէջ ընդունելութիւններ կատարել են, ուր Եպ.ը յորդորական ևս խօսքեր է տղայոց, որոնք գողարիկ զգացումներով ի ճառասացութիւններ ըրած են: Կը ցաւինք և որ թերթիս տեղւոյն անձկութեան պատճառաւ ստիպուած ենք այսքան համառօտել մեզ ուղղուած տեղեկագիրը և զրկուիլ մանաւանդ այսկերտաց զգալի յառաջդիմութեան վկայող ճառերէն մին կամ երկուքը: Դեռ իբր նմոյշ: Յամենայն դէպս շնորհաւորութիւններ կ'ուղղենք խնամակալներու, վարչական և ուսուցչական մարմնոյն և սաներուն միանգամայն, և կը մաղթենք յառաջագէտ զարգացումն, որ միայն պիտի կարենայ լուսաւորել և քաղաքակրթութեան մէջ արժանաւոր տեղ մը յատկացնել այս բաղձամբոյ, բարի և ի բնութենէ չքնաղ ձիրքերով օժտուած Հայ—Վաթողիկէ ժողովրդին:

* * Արհի. Անդրէաս Եպ. Չելեպեան, վիճակաւոր Տիգրանակերտի, Հինգշաբթի օր մեկնեցաւ իր թեմ, Պէյրութի ճամբով: Ի շողենաւ ողջերթի գնաց, Արհի. Աւետիս Արքեպ. Արփիս րեան, յանուն Ամենապ. Վաթողիկոսին: Կային նաեւ ուրիշներ, որոնք մաղթանքներով հրաժեշտ առին Արհի. Եպ.էն:

~*~*~*~

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Նախարարաց Խորհուրդը մասնաւոր գումարման մը մէջ որոշեց որ օսմանեան Կոյսութեան մէջ բնակող ամբողջ իտալացիները պիտի վտարուին, բացի երկաթուղիներու շինութեանց մէջ աշխատող բանուորներէ, եկեղեցականներէ ու երկսեռ միանձներէ, ինչպէս նաեւ այլիներէ: 15 օրուան պայմանաժամ տրուած է օսմ. երկրէն հեռանալու համար: Սուլթանական իրաւէ մը վաւերացուց նախարարական խորհուրդի այս որոշումը: Իտալացիներուն տրուած տասնհինգօրեայ պայմանաժամը պիտի հաշուուի այսօրուրէն (Զորեքշաբթի): Իտալացիները վտարելու կայսերական իրաւէն, պաշտօնապէս հաղորդուեցաւ գերման դեսպանատան:

* * Իսալական մաւառմիւն շաբթուաներ. — Արշիպիզազոսի մէջ գործող իտալական նաւարաժին մը սկսած է յածիլ Գիոսի շուրջը, իսկ ուրիշ նաւարաժին մըն ալ, ինչպէս կը հեռագրուի Իզմիրի կուսակալութեան երէկուան թիւով, Պօտրումը պաշարած է:

Իտալական նաւատորմը ցարգ գրաւած է 11 կղզիներ, որոնց մէջ հաստատուած է: Քիոսի գրաւումը մօտալուտ է: Թէեւ եւրոպական թերթեր Սամոսի գրաւումն ալ հաւանական ցոյց տուած էին, սակայն Բ. Դրան մէջ կասկածելի կը թուի այդ լուրը, Սամոսը գրեթէ միջազգային կղզի մը նկատուելով:

* * Կահանաւիճ պատասխանը. — Երեսփոխանական ժողովի նորընտիր նախագահ Խալիլ պէյ, փոխ-նախագահ Մէհմէտ փաշա և ատենադպիր Միւֆիտ պէյ երէկ Կայսերական պալատ երթալով Սուլթանին յանձնեցին ժողովին կողմէ քնուարկուած ուղերձը ի պատասխան Գահաճումին:

* * Ելմտական նախարար Նաիլ պէյ հրաժարեցաւ. ձովիտ պէյ փոխանորդարար պիտի վարէ այդ պաշտօնը:

~*~*~*~

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Լ ՈՒՐ ԵՐ

Եփրեմի յաղթական մահը պատկերված վրայ.— (Պաշտօնական հետադիր Պատիկ առ-
ջափին գործերու նախադրուքներն ուղղուած՝ Պոչտոյ պատիկից դեպքանին)

Թէ՛ՀՐԱՆ, 8 Մայիս.— Ֆիրման-Ֆիրմայի յաղթուելուն լուրը երբ ստացաւ, վար-
չապետը զրկեց Եփրեմը՝ Պախթարցի հեծելազօրքին հետ՝ ապստամբներուն դէմ, որոնք շատ
ուժեղացած էին վերջերս։ Անցեալ կիրակի (Ապրիլ 29) Եփրեմ Համատան մեկնեցաւ ին-
տար ժամ տեւեց անընդհատ ճակատամարտ։ Թշնամիին բոլոր պատնէշները անցան կա-
ռավարական զօրքին ձեռքը, անոնց բոլոր հրամանատարները գերի բռնուեցան և գնդա-
կահար եղան։ Թշնամին ռազմադաշտին վրայ թողուց 200 գեղեր, 150 վերաւորներ և
մօտ 300 հոգի սպաննուած։

Յաղթութիւնը փայլուն էր։ Բայց աւա՛ղ. կռիւին վերջերը, Եփրեմ խան քաջ ընդ-
հանուր հրամանատարը, որ պատնէշներէն մէկուն վրայ անվեհեր կը կռուէր՝ իր ընկեր
Տօքթ. Ջօհրապ խանի հետ թշնամի բանակին դէմ յանդիման, վերաւորուեցաւ ու մեռաւ։
Կառավարական բանակին միւս հրամանատարները և Պախթարցիք այդ մեծ կա-
րուստէն իսկ չվհատելով՝ ընդհակառակն վրէժխնդիր ոգիով ինկան թշնամիին վրայ և կա-
տարեալ յաղթութիւն տարին։

Սակայն Եփրեմին կորուստը այն տեսակէն է որուն փոխարէնը երբեք ձեռք պիտի
չանցնի։ Այդ մեծ մարդը պատմութեան մէջ տալիս կարգ հրամանատարներուն շարքը
անցած է, և Պարսկաստանի պետութեան ու Սահմանադրութեան անփոխարինելի ծառա-
յութիւններ մատուցած է։

* Ամսոյս 19ին երկրաշարժի ցնցում մը պատահեցաւ ի Մեքսիկայի Ձեւաբլուան
քաղաքին կէսը կործանեցաւ և 84 հոգի մեռան։ Քօլիմա հրարուիւր պայթեցաւ երկրա-
շարժին հետեւանօք, իսկ ապստամբական շարժումը կը շարունակուի Մեքսիկայի Զօր.
Հուլիսի հաւաքած ըմբոստները կ'ողողուն դէպի Էսքալոն, ուր համախմբուած է իրենց
ոյժերուն մեծագոյն մասը, օդ հանելով կամուրջներն ու քանդելով ամէն ինչ իրենց ճամ-
բուն վրայ։ Մօտերը կ'սպասուի վճռական ճակատամարտին։ Ամենուրեք խռովութիւն կայ։
Կառավարութիւնը ամէն ոյժ ունի հիւսիսի ապստամբներուն դէմ կռուելու համար։

* Աշխարհի մեծագոյն շոգենաւը, գերման Խիլէնաքօր, Մայիս 24ին ծով պիտի
իջնուի, ի ներկայութեան կայսեր։ Ունի 50000 թօնօ տարողութիւն, 900 ոտք երկայնք,
այսինքն դժբախտ Թիքանիէն 50 ոտք աւելի։ Այս շոգենաւը պիտի կրնայ 5000 հոգի
առնել։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն

Ներքողեան Ս. Ներսէսի Լամբրոնացւոյ	241
Դերեգմաններ Ուկրոյ Ֆոսկոյոյ	246
Քրիսթոնիսի	248
Անկիւրիոյ Հ. Կ. Գերեգմանօտուց	251
Վարդան փառա	252
Տեղեկագրական	254

ԱՐՏՕՆԱՏԷՐ
304Հ. Ծ. Վ. ԿԵՏԻԿ



ՏԵՐԵՆ-ԽՄԱԳՐԱԴԵՏ
ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Օսմանեան Գործակցական Ընկ. Էպոստոլոս հասէսի Նօ. 27

«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ Պատրիարքարա պատշտական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր էջերէ բաղկացած եւ նոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյգ ամեն յուրերն՝ համառոտ-ուած . որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ շունին օրաբերք կարդալու :

ԲԱԺԱՆՈՐԴԱՆՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար	
Տարեկան	Պէնկ . արծ. 40
Վեցամսեայ	» » 20
Արտասահման	
Տարեկան	Ֆրանկ 10
Վեցամսեայ	» 5
Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Բոսնով եւ կամ մէյ մէկ դրեւնոց նամակադրումով :	

Մէկ թիւ 1 Դանեկան



Նամակ , յօդուած , եւն. կը դրկուին խմբագրութեան հասցիին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց
Բերա Կ. Պոլիս

Katoghiké Arzakank
Patriarcat Catholique
Péra Constantinople

- ԾԱՆՕԹ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի շաբաթ օրերը:
2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:
3.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:
4.— Յօդուածներու ձեռագիրները պէ՛տ է գրուած թլլան բոլորին մէկ կողմը միայն:
5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կրկնատուին: